ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 հուլիսի 2017 թվականի N 116-Ա

Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին և 167-րդ հոդվածի 3-րդ մասերի, հիմք ընդունելով *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 328-Ա որոշումը՝* **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ ***Տարոն Գևորգյանին*** տրամադրել *2016* թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ յոթ աշխատանքային օր, ինչպես նաև 2017 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 24 աշխատանքային օր, 2017 թվականի օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ:

2. ***Տարոն Գևորգյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ ***Ակեքսան Եղիշյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի 31
ք. Հրազդան